

«ԷՄ. ԹԻ. ՎԻ.» ԵՒՍ ԵՆԹԱԿԱՅ ԴԱՏԱԿԱՆ ՀԵՏԱՊԵՂՈՒՄԻ

Վերադատ ատեանի Պէյրուսի ընդհանուր դատախազ ժոյէֆ Մամարի պատկերասփիւղի «ԷՄ. ԹԻ. ՎԻ.» կայանը ամբաստանեց անցեալ Կիրակի օր սփռուած «Իսթիֆթա» քաղաքական յայտագիրը, որուն նպատակն էր Լիբանանի եղբայր նկատուող երկրի մը հետ յարաբերութիւններու ստեղծում եւ այդ երկրի նախագահին արժանապատուութեան խոցում, ապահովական պատասխանատուներու վարկաբեկում եւ ընդհանուր խաղաղութեան վտանգի սպառնալիք:

Ամբաստանութիւնը ուղղուած է ամբողջ «ԷՄ. ԹԻ. ՎԻ.»ին քաղաքական յայտագիրներու տնօրէն Պուլուս Էլիաս Հատտատի եւ յայտագրի հաղորդավար Չիատ Նժէյի:

Մամարի նշեալ թղթածրարը փոխանցեց Պէյրուսի աւագ քննիչ դատախազ Հարթմ Մատի:

Մամարի Պէյրուսի հրատարակութիւններու յատուկ ատեանին փոխանցեց նաեւ տեսաերկեր, որոնք կը պարունակեն երգերու տեսահոլովակներ (քլիպ) սփռուած Հիւսիսային Մերթի երեսփոխանական մասնակի ընտրութիւններու ընթացքին:

Իր կարգին, ընդհանուր դատախազ Ատան Ատտուն վզուշացուց իւրաքանչիւր խօսնակ՝ «հաշուելու մինչեւ 100», նախքան որեւէ յայտագրի ուղղակի սփռումը, որովհետեւ հետապնդումները պիտի շարունակուին՝ զսպելու համար երկրին մէջ գործող օրէնքի խախտումները:

ՍՏԱՅԱՆԸ

•KAREKIN I IN HIS OWN WORDS

Շեղիմակ՝ ԻՐԻՍ ՓԱՓՈՋԵԱՆ
Շրտարակութիւն՝
Գարեգին Ա. Աստուածաբանական եւ Հայագիտական Ուսումնասիրութիւններու շարք

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Սուրէն Պալեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Կարպիս Պալեան եւ զաւակունք
Տիկին Մենտուհի Պալեան եւ զաւակունք
Տիկին Ալիս Ռապպալ եւ զաւակունք
Տիկին Մարի Ռապպալ եւ զաւակունք
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց եղբոր, հօրեղբոր եւ հարազատին՝

ՀԱՅՐ ԳԵՌՐԳ Ծ. ՎՐԴ. ՊԱԼԵԱՆԻ
(Ծնեալ՝ 1936ին,
Գալիկի Աբբահայր Միխթարեան վանքին)

վախճանուժը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 5 Օգոստոս 2002ին, վեներտիկ մէջ, Իտալիա:

Յուզարկաւորութեան արարողութիւնը եւ թաղման կարգը կատարուեցաւ Չորեքշաբթի, 7 Օգոստոս 2002ին, վեներտիկ հայ կաթողիկէ Ս. Ղազար վանքին մէջ եւ մարմինը ամփոփուեցաւ տեղւոյն գերեզմանատունը:

•Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
•Վախճանեալ հայր Գերգ Ծ. վրդ. Պալեանի հոգւոյն համար Ս. պատարագ պիտի մատուցուի Կիրակի, 11 Օգոստոս 2002ին, Ռատուայի հայ կաթողիկէ Միխթարեան վանքին մէջ, առաւօտեան ժամը 10:00ին:

•Յաւակցութիւնները կ'ընդունուին յետ հոգեհանգստեան, Միխթարեան վանքին սրահին մէջ:

ՄԱՀԱԶԴ

Տիար Աւետիս Պէզճեան եւ զաւակները՝ Յովիկ եւ Փաթիլ
Տէր եւ տիկին Տրդատ Աւետիքեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վազգէն Օղասապեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Արմէն Պիոս եւ զաւակունք
Տէր եւ տիկին Գէորգ Գոլանճեան եւ զաւակունք
Օրիորդ Հելէն Պէզճեան
Աւետիքեան ընտանիք
Պէզճեան ընտանիք
Օղասապեան ընտանիք
Պիոս ընտանիք
Կիրակոսեան ընտանիք
Կէօբէզօգեան ընտանիք
Յարութիւնեան ընտանիք
Աճճեան ընտանիք
Մանուկեան ընտանիք
Թանգապեան ընտանիք
Տէրտէրեան ընտանիք
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մօր, դստեր, բոլջ եւ հարազատին՝

ՅԱՍՄԻԿ ՊԵՋՃԵԱՆԻ
(Ծնեալ՝ ԱԻԵՏԻԸԵԱՆ, 1963ին)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 6 Օգոստոս 2002ին, երեկոյեան ժամը 8:30ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 8 Օգոստոս 2002ին, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

•Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
•Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Աուքար, Մանուր Թոնմէ շէնք, քիւ 26, Ուրբաթ 9, Շաբաթ 10 եւ Կիրակի 11 Օգոստոսին:
•Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել բարեխիղճ կամ հաստատութիւններու:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԿԸ ՉՕՐԱԿՅԻ «ԷԼ. ՊԻ. ՍԻ.»Ի ԵՒ ԱՆՏԵՂԻ ԿԸ ՆԿԱՏԵ ԱՆՈՐ ԴԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԱՐՇԱԲԸ

Պատկերասփիւղի «Էլ. Պի. Սի.» կայանին դէմ կատարուած ամբաստանութիւնը, թէ կայանը 31 Յուլիս 2002ին ԵՈՒՆԵՍԿՕԻ ռճիրին լուրը ներկայացուցած է այնպիսի ձեւով մը, որ համայնքային լարուածութիւններ հրահրէ եւ երկրին անդորրը խախտէ, փոխանցուած է Պէյրուսի շրջանային վերադատ ատեանին: Պէյրուսի աւագ քննիչ դատախազ Հարթմ Մատի յայտնեց, որ ատեանը «Էլ. Պի. Սի.»ի թղթածրարի քննութիւնը պիտի սկսի 22 Օգոստոսին:

Մատի այս առնչութեամբ հարցաքննութեան կանչած է «Էլ. Պի. Սի.»ի լուրերու բաժնի պատասխանատու խմբագիրը՝ Ժան - Ժոյէֆ Ֆիլի:

Փաղանգաւոր Կուսակցութեան նախագահ Քարին Բագրատունիի յայտարարեց, որ որեւէ հարցով դատական ատեաններու ներկայանալը բնական է, օրինակ եւ սահմանադրական. օրինակ, վերջերս կատարուած է տեղեկատուութեան միջեւ ծագած հարցը:

Բագրատունի նկատել տուաւ, սակայն, որ տեղեկատուութեան նախարար Ղաւի Արիտի իր գիրքներ կայացնելէ առաջ ատեանին՝ պետք է առնէր տեղեկատուութեան ազգային խորհուրդի հաւանութիւնը: Բագրատունի պահանջեց Ահմէտ Մանուրի դէմ արձակել ամենախիստ վճիռը, ինչպէս նաեւ Ռամի Իրանիի, Էլիաս Հրպայի եւ Չախլէի չորս դատախապներու սպանութեան թղթածրարները քննել եւ պղղապատել բազուկով հարուածել ռճագործները:

Կեց պաշտօնական հաղորդագրութիւն մը, որուն մէջ հաստատեց, որ ինք անձամբ լիապօրում չէ ստանձնելու ԵՈՒՆԵՍԿՕԻ ռճիրին հետաքննութիւնը, համաձայն՝ նախարարաց խորհուրդէն բխած թիւ 8319 շրջաբերականին, որ կ'ըսէ, թէ ԵՈՒՆԵՍԿՕԻ շրջանին մէջ գտնուող կրթական նախարարութեան պատկանող սեփական վարձարաններու ուսուցիչներու հատուցման սնուովին մէջ գործուած ռճիրին եւ տարբերութեան թղթածրարը պիտի փոխանցուի արդարադատութեան խորհուրդին:

Իսկ արդարադատութեան նախարար Սամիր ժըրի թիւ 944 որոշումը կ'ըսէ, թէ դատախապ ժիհատ Ռատի պիտի վերադառնայ հազարի հետաքննութեամբ եւ դատախապ Մատի ԵՈՒՆԵՍԿՕԻ ռճիրի թղթածրարը պիտի յանձնէ Պէյրուսի շրջանային վերադատ ատեանին, որ իր կարգին պայն փոխանցէ արդարադատութեան խորհուրդին:

Բագրատունի պահանջեց Ահմէտ Մանուրի դէմ արձակել ամենախիստ վճիռը, ինչպէս նաեւ Ռամի Իրանիի, Էլիաս Հրպայի եւ Չախլէի չորս դատախապներու սպանութեան թղթածրարները քննել եւ պղղապատել բազուկով հարուածել ռճագործները:

Միւս կողմէ, Պէյրուսի աւագ քննիչ դատախազ Հարթմ Մատի երէկ հրապարարեց, որ ինք անձամբ լիապօրում չէ ստանձնելու ԵՈՒՆԵՍԿՕԻ ռճիրին հետաքննութիւնը, համաձայն՝ նախարարաց խորհուրդէն բխած թիւ 8319 շրջաբերականին, որ կ'ըսէ, թէ ԵՈՒՆԵՍԿՕԻ շրջանին մէջ գտնուող կրթական նախարարութեան պատկանող սեփական վարձարաններու ուսուցիչներու հատուցման սնուովին մէջ գործուած ռճիրին եւ տարբերութեան թղթածրարը պիտի փոխանցուի արդարադատութեան խորհուրդին:

ՃՆՈՐԸԱԿԱԼԻԵ

•Տիկին Պերճուհի Աշճեան եւ զաւակը՝ Մայր, շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց ամուսնոյն եւ հոր՝ Յովսէփ Աշճեանի մահուան սուգին:

ԿՈՒՉՈՒԻ

•Ոսկերչական մոմի վրայ աշխատող փորձառու օրիորդ մը: Դիմել՝ հեռ. 03-375724:

ԿՈՒՉՈՒԻ

•«Էր - քոնտիսիոնէի» մեծ հաստատութիւն մը կարիք ունի վարպետ «թեքնիսիոնէ» (նորոգող եւ անցնող), լաւ պայմաններով: Դիմել՝ հեռ. 03-800601 եւ 01-378801:

ԿՈՒՉՈՒԻ

•Հաշուապահ օրիորդ մը, անգլերէն եւ համակարգիչ գիտնալը՝ պայման: Հեռ. 01-242549:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

•Յովհաննէս Թաւլագեանի մահուան առթիւ, տիկին Արաքսի Մազմանեան 25,000 լ. ո.՝ ԲԱՇԼԻՆ:

STUDIO
Lantern
•Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ
Հեռ. 01-268866
եւ 03-695399

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

•ՆՈՐԿՐԴԱՐԱՆԱԿԱՆ յանձնախումբերը երէկ խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆրիլիի զիջարութեամբ գումարած իրենց ժողովին եզրափակեցին քննարկումը եւ որոշեցին ելեկտրականութեան մարդի վերակազմակերպման (ապապետականացման) օրինագիծը:

Ժողովը բարեփոխումներ կատարեց կատարութեան յղած տարբերակին վրայ, կեդրոնանալով սպառողին եւ ելեկտրականութեան ընկերութեան պաշտօնէաներուն եւ աշխատանքներուն իրաւունքներու պաշտպանութեան վրայ:

•ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ընկերութիւնը երէկ յայտարարեց, որ Լեռնայիքանան, Պեքաան, հիւսիսը եւ հարաւը օրական երկու ժամ հոսանք պիտի վրկուին. այս երկու ժամը պիտի աւելնայ արդէն ի պորու իտաւաքի հայթայթումի ժամերու կրճատման հաստատման վրայ:

Այս ժամանակացոյցին պատճառը տարբեր ելեկտրականներու մէջ ելեկտրածին սարքերու խանգարումն է, ըսաւ ընկերութիւնը. հաստատելով, որ իր խմբակները արդէն սկսած են նորոգութեան աշխատանքներուն եւ այսօր պիտի աւարտի սարքերէն ոմանց նորոգութիւնը:

•ԲԱՆԱԿԻ հրամանատարութեան տեղեկատուական հարցերու վարչութիւնը երէկ հաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ կէսօրէ ետք ժամը 1:25ին իսրայէլեան վեց պատերազմական օդանաւեր թռիչքներ կատարեցին հարաւի վերեւ, ապա ուղղուեցան հիւսիս, դէպի Թրիփոյի, ուրկէ անցան Պեքաան եւ Պալմայէթի վերեւ թռիչքներէ ետք, ժամը 2:50ին հեռացան Լիբանանի օդային սահմաններէն:

Դիմադրութիւնը իր կարգին հաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ իր ուժերը երէկ կէսօրին բազմաթիւ անգամներ կրակ բացած են լիբանանեան գերիշխանութիւնը խախտած թշնամիի պատերազմական օդանաւերուն վրայ:

•ՍՖԵՅՐ պատրիարքը երէկ ընդգծեց անհրաժեշտութիւնը ամրապնդելու եւ խորացնելու ազգային երկիւստութիւնը, արմատացնելու համար լիբանանցիներու միութիւնը. ան նաեւ շեշտեց անհրաժեշտութիւնը լաւագոյն յարաբերութիւնները մշակելու Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ, երկու երկիրներու գերիշխանութեան եւ անկախութեան շրջագիծէն ներս:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՄ

Ազգային Իշխանութեան Ուսումնական Խորհուրդը, տնօրէնութեան համար դիմումներ կ'ընդունի, նուազագոյն հետեւեալ պայմաններով մին լրացնող համալսարանաւարտ թեկնածուներէ, որոնք տիրացած են.

- 1.- «Կրթական Վարիչ»ի Մագիստրոս տիտղոսին (M. A. in School Administration) եւ ունին ուսուցչական փորձառութիւն:
- 2.- Համալսարանական «Պատկաւոր Գիտութեանց կամ Արուեստից» տիտղոսին (B. S. / B. A. in Computer Science or Business) եւ ունին 5 տարուան ուսուցչական փորձառութիւն:

Դիմումները կ'ընդունուին Ազգ. Առաջնորդարանի մէջ:

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Վարուժ եւ Լարա Օղլեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Ժորժ եւ Նաթալի Հոմսի եւ զաւակունք
Տիկին Անուշ Տեմիրճեան եւ զաւակը՝ Մահալ
Տէր եւ տիկին Գրիգոր եւ Փերուզ Նազրեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Նալիլ եւ Հոփի Քարամ եւ զաւակունք
Գրիգորեան ընտանիք
Գօթոյեան ընտանիք
Դաւիթեան ընտանիք
Մուրատեան ընտանիք
Գոճայեան ընտանիք
Մթամպուլեան ընտանիք
Պալեան ընտանիք
Պայրաքարեան ընտանիք
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մօր, դստեր, բոլջ, գոթանչին, քենիին եւ հարազատին՝

ՄԱՐԻ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
(Ծնեալ՝ ՏԵՄԻՐՃԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 8 Օգոստոս 2002ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Նոյն օրը, Հինգշաբթի, 8 Օգոստոս, կէսօրէ ետք ժամը 5:00ին, Նոր Ատանա թաղի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

•Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
•Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Հարթմ Մատուր, Մար Եուսէֆ եկեղեցոյ տարի, փուռ Ապուլի կից, գետնայարկ, Ուրբաթ 9, Շաբաթ 10 եւ Կիրակի 11 Օգոստոսին: (Հեռաձայն՝ 01-251620):
•Կը խնդրուի նուիրատուութիւններ կատարել ազգային ծերանոցին:

«ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍԵԱՆ»
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԿԱԶՄԱՒՈՐՈՒՄԻ ԿԵԴՐՈՆԸ
Հաճոյքն ունի յայտարարելու, թէ իր շրջանաւարտուիներէն
ԼԵՆԱ ԱՐԿՈՂԵԱՆ
ՃԵՆԻ ՍԱՆԴՈՒՄՏԵԱՆ
ԶԱՊԵԼ ՓԱՉԱՆԵԱՆ
Յաջողած են պետական T. S.ի ընձուրեան

SALON
MANO
For Men & Kids
The right choice...
Bourj Hamoud
Municipality Street
Center Arine, 1st Fl.
Tel.: 01/262181

Կազմակերպութեամբ
Հ.Յ.Լ.Ե.Մ.ի «Իսթիֆթա» Մասնաճիւղի
Հայկական երգերու Փառատօն
ԵՆՈՅ ԿՈՒՆԵԱՆ
ԵՍԵ ԳՆԱՏԱՍՐԵԱՆ - ՍՈՒՆԻ ՓՍՊՈՒՅԵԱՆ - ՎԳԳԵՆ ՏՈՒՐՅԵՆԵԱՆ - ՀՐԱԶ ԿՍԹՅՍԿԵԱՆ - ՄԵՆՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆ - ԿՍՐ ԿԵՊՈՒՅԵԱՆ - ՍՐՈՒՄՆ ԱՎՐԱՆԵԱՆ - 4090 ԿԵՉԵԼԵՅԵԱՆ:
ՄԱՆՍԿԱԳՈՒԹԵԱՆ
ՍԵԳՕ ԳՆԱՏԱՍՐԵԱՆԻ
ՏԵՆԻ ԿՈՒՆԵԱՆ ԻՐԻՐԱԾ 9 ՕԳՈՍՏՈՍ 2002ԻՆ,
ԵՐԵՎԱՆԵԱՆ ԺԱՐԸ 8ՈՐԵՆ, ՅՈՎՀԵՆԵՍ ԳՕԴՈՍԵԱՆ ՀԱՐԿՈՒՄՈՐԱԿՐԻ ՄԵՋ.
ՊՈՐՉ ՀՍՈՒՅ:
Սակ՝ 5000 լ. ո.

Շրդ Արուեստ



ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ԽՈՐՀՐԴԱՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ԺԱՊԱԻԷՆԸ «ԼՈՌԻԹԵԱՆ ՀԱՄԱՆՈՒԱԳ»

Անցնող ամիսներում առաջին անգամ ըլլալով հայկական ժապաւենը մը մաս կազմեց «Օսթար»-ներու թեկնածու բազմաթիւ օտար ժապաւեններու խումբին: Ժապաւենը ներկայացաւ դատական կազմի ընտրութեան, սակայն չյաջողեցաւ մտնել լաւագոյն օտար ժապաւենի թեկնածուներու հնգեակին մէջ: Ժապաւենը հայրենի բեմադրիչ Վիգեն Չալտրանցեանի «Լոռութեան համաճուղազ» գործն է, որ մասնակցած է միջազգային բազմաթիւ փառատօներու եւ տիրացած է մրցանակներու: 2001ի Ընկերութեան Հայաստանի եւ Միացեալ Նահանգներու մէջ հրապարակ իջած այս ժապաւենին իւրայատուկ պատմութիւնը կը ներկայացնէ իր կեանքի վերջին հանգրուանին մեղքերու թողութիւն փնտռող ոճրագործ մը, որ հոգեբուժարան մը կը վերածէ երկրային դրախտի: Երգիծական այս պատմութեան ընդմէջէն բեմադրիչը կ'ուրուագծէ այսօրուան Հայաստանի դիմաստուերը, ուր ակնարկութիւններ կան մարդոց անհեթաք գոյութեան մասին:

Ֆրանսահայ «Ֆրանս Արմենի» շաբաթաթերթն քաղցրով մեր տեղեկութիւնները, ժապաւենին մասին կը ներկայացնեն որոշ մանրամասնութիւններ: Նշենք, որ «Լոռութեան համաճուղազ»ը միացեալ արտադրութիւն է հայկական «Արմենֆիլմ» եւ ֆրանսական «Պոմմանկ» ընկերութիւններուն:

Մէլ Տեւըն (Միքայէլ Պօղոսեան) ամերիկացի գործարար մըն է, որ ունի հետաքրքրական անցում մը: Նախկին խորհրդային Հայաստանի մէջ իր մահուան յաճախանքները Գոթն իր գործած ոճիւրներու մահապատիժէն փախուստ տալու համար կ'որդեգրէ խնջի Նամարը եւ կը դառնայ մէջ: Եւ ժապաւենը կը հոգեբուժարանի մը բնակիչը: Իր վերջին անգամներուն հետ Սիւրբալոյ Նա-

կ'ունենան իր երկրին կրած փոփոխութիւնները: Տնտեսական տագնապը հարուածած է երկիրը, փտածութիւնը իր թեւերը տարածած է ամէնուրեք, իսկ ծնողները, հարազատներն ու ծանօթները մահացած են: Ան իր հայրենի գիւղը կը գտնէ օտարներով բնակուած եւ ան ոչինչ կը գտնէ ընկելը, բացի նախապէս իրեն ապաստան ծառայած եւ զինք մահէ ազատած հոգեբուժարանը գտնելէ: Մէլ կ'որոշէ իր կեանքին վերջին տարին յատկացնել բարի նպատակի մը եւ այդ հոգեբուժարանը վերածել բարեփոխական կեդրոնի, կամ՝ աւելի ճիշդը, անոր ապաստանները փոխադրել երկրային դրախտ մը: Արդեօք քմահաճո՞ք մը կամ գոտ մարգասիրական հակուածն է: Նոյնիսկ Մէլ ինք չի գիտեր այս հարցումներուն պատասխանը: Իր այս արարքը պարզապէս որեւէ ձեռով իմաստ մը պիտի հաղորդէր անոր կեանքին: Տակաւ առ տակաւ ան կը կառուցէ ամբողջովին անխրակն եւ երազային աշխարհ մը, եւր աստիճանաբար կը խաղաղի իր



Տեսարան մը «Լոռութեան համաճուղազ» ժապաւենէն, դրախտանման հոգեբուժարանին ոսկեայ դիմակներով բնակիչները

փոփոխութեանը եւ լսելի կը դառնան լուրթեան համաճուղազները:

«Լոռութեան համաճուղազ»ը այլաբանական նիւթով ժապաւեն մըն է: Մէլի տարօրինակ ճակատագիրին դիմաց Վիգեն Չալտրանցեան կը հարցադրէ երկրին վրայ դերին յարմարող անոր խաղարկութիւնը: Գոյն Մէլի կամ՝ ոճրագործը բարեգործի փոխելով, ժապաւենը կ'աղաղազունայ մարդուն վրայ մահուան սպառնալիքին կատարած փոփոխութիւններուն: Ան ցոյց կու տայ, որ մահը կարող է շատ բան փոխելու, մարդոց կեանքին վերջին վայրկեաններուն անոնց խիղճը արթնցնելու: Իր տիպարին բարեսիրական արարքներուն եւ, անոնց շնորհիւ, անոր հոգեկան «բեռնաթափումին» դիմաց՝ Վիգեն Չալտրանցեան անուղղակիորէն կ'ուզէ բեմ հանել հայաստանեան ընկերութեան իսկական պատկերը եւ, իր հայեցողութեամբ, «բուժում» կ'առաջարկէ ընկերութեան փտածութեան պատասխանատուներուն:

Շաբուան Ժապաւենը

«ՏԸ ՍԱՄ ԱՖ ՕԼ ՖԻՐՉ» ԿԸ ԼՈՒԹԷ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՏԱԳՆԱՊ ՄԸ



Պէն Աֆլէք՝ «Տը սամ աֆ օլ ֆիրզ»ի մէջ

Կեանքը սկսած է գեղեցիկ ընթանալ Սի. Այ. Էյ.ի գործակալ երիտասարդ ձեք Ռայլընի (Պէն Աֆլէք) համար, որ կ'աշխատի ուսական թղթածրարի մը վրայ: Միաժամանակ ան ուրախ է գեղեցիկ Քեթիի հետ (Պրիսիլա Մոյնա-հան): Երբ Ռուսիոյ նախագահը կը մահանայ եւ անոր կը յաջորդէ Միացեալ Նահանգներու «անծանօթ» Ալեքսանտր Նեմերով (Սիւրբալոյ Հինոպ), երկու երկիրներուն միջեւ կը վերսկսուի հին պատմութիւններու արծարծումը: Սի. Այ. Էյ.ի տնօրէն Ուիլիամ Քեյլըք (Մորկըն Ֆրիմըն) Ռայլընի կը յանձնարարէ նոր անձնաւորութեան թղթածրարներուն բացառաշատ մը: Սակայն դեպքերը ակնկալուածէն աւելի արագ կ'ընթանան: Նախ ումբակոծում մը գտնուի հաւասար կը դարձնէ Չեչենիոյ մայրաքաղաքը: Յետոյ, անսպասելի բան, կորիզային ումբ մը կը պայթի ամերիկեան հողի վրայ: Հին բշտամիները կը սկսին զիրար ամբաստանել, սակայն ձեք համոզուած է, որ ահաբեկչական արտաքին ուժ մը կը կանգնի այս բոլորի հետին: Քաղաքական վերլուծական յօդուած, ամբարիկեան կարեւոր շաբաթաթերթի մը շաբթուան ռիփօրը. ոչ: Վերոյիշեալ բոլորը դիպաշարին մէկ մասն են վիպագիր Թոմ Գլենի «Տը սամ աֆ օլ ֆիրզ» վիպակ վրայ հիմնուած պատերազմական-լրտեսական տրամալին, որուն հերոսը աշխարհը պիտի փրկէ հաւանական երրորդ աշխարհամարտէ:

Հակառակ ամերիկեան-ուսական տագնապներ արծարծող ժապաւեններու մէջ ցարդ երեւցած Ռայլըն անուճով փորձառու գործակալներուն, բեմադրիչ Ֆիլ Ալտըն Ռոպինընի «Տը սամ աֆ օլ ֆիրզ»ի մէջ Պէն Աֆլէքի մարմնաւորած Ռայլընը անփորձ, երիտասարդական եռանդով եւ իտալապաշտութեամբ լեցուն տիպար մըն է, որ պարագաներու բերումով կը ստանձնէ ծանր բեռ մը: Պէտք է ըսել, որ դերասանը յաջողած է բաւական յաջողութեամբ կատարել իր պարտականութիւնը: Միւս կողմէ, Մորկըն Ֆրիմընը, ինչպէս միշտ, այս ժապաւենին մէջ եւս յաջողած է ցուցաբերել տպաւորիչ խաղարկութիւն:

Ֆիլ Ալտըն Ռոպինընի այս ժապաւենը կը մտնի երեւակայական վիպի մը՝ հիմնուած իրական կեանքէն քաղուած տուեալներու վրայ: Թեւէ հըջընի յատուկ տեսարաններ ունեցող այս ժապաւենին մէջ տեղի ունի կանտիկալ երգեր, ինչպէս կորիզային ումբի մը պայթումէն ետք ստեղծուած թոնուրոսին եւ մոխիրներու տարափին մէջ բռնաբանութեան օրհանգումով գրադրուած ժամանակ գտնելու բաժիններ: Իր ժանրի ժապաւեններէն ակնկալուած բոլոր զարգացումները եւ, որոշ տեղեր, կրկնութիւնները ունեցող «Տը սամ աֆ օլ ֆիրզ» բայց եւ այնպէս առանձնաշատ դիրք կը գրաւէ յատկապէս երկու երեւոյթներով: Այս ունեւոր չեն ներկայացուած իբրեւ ժխտական հերոսներ (թեւէ նազիները կը շարունակեն այդ պիտակը կրել) եւ ապա, հանդիսատեսը կը տեսնէ կորիզային ումբի մը պայթումը, մինչ այլ ժապաւեններու մէջ հերոսը ընդհանրապէս ժամանակ կ'ունենայ գայն չեզոքացնելու: Այս երկուքը նորութեան շունչ մը կու տան ժապաւենին:

Թեւէ ժապաւենը շատ կը մտնի հոլիվուտեան քաղաքական-հըջըն ժապաւեններու մեծամասնութեան, սակայն հանդիսատեսը մեծ հաւանականութեամբ սրահէն հեռանայ գոհ:

Պատրաստեց՝ Պ. ՓԱՆՈՍԵԱՆ

Ո՞Վ Է ՎԻԳԷՆ ՉԱԼՏՐԱՆԵԱՆ

Վիգեն Չալտրանցեան ծնած է Երեւան, 1955ին: Ռեժիսորական եւ քաղաքական արուեստներու մէջ վկայուելէ ետք, ան բազմաթիւ ժապաւեններու եւ քաղաքախոսութեան մէջ հանդէս կու գայ զանազան դերերով: Իր բեմադրած առաջին ժապաւենը՝ «Ապրիլ» (1985)



նուիրուած է հայ ժողովուրդի ողբերգական նակատգրիին եւ կը շօշափէ Հայկական Յեղափոխութեան թեման: Այս ժապաւենը կը ցուցադրուի Մոսկուայի, Քիեւի եւ շարժապատկերի այլ փառատօներու ընթացքին եւ 1991ին բեմադրիչին կ'ապահովէ Ամերիկայի Ռեժիսորի Ընկերակցութեան անդամակցութիւն: Իր երկրորդ՝ «Տը վոյս ին տը ուիլտընէս» ժապաւենով Վիգեն Չալտրանցեան կը տիրանայ բազմաթիւ մրցանակներու: 1993-1996 ան կը պատրաստէ հեռատեսիլի համար բազմաթիւ ժապաւեններ: Միացեալ Նահանգներու մէջ «Փարամուտիթ» ընկերութեան հետ գործակցաբար ան կը պատրաստէ իր երրորդ ժապաւենը՝ «Քրիսի էլիսըն»: Ան ներկայիս կը պատրաստէ «Սիվիլիա» խորագիրով ժապաւեն մը:

Հանգներ փախուստ տալէ ետք, իբրեւ յաջող գործարար, ան կը բարգաւաճի, սակայն մահուան ժամը անհայտ է:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՍՐԱՀՆԵՐԷՆ ՆԵՐՍ

Լիբանանեան սրահներուն մէջ այս շաբթուան հիմնական նորութիւնն է «Տը սամ աֆ օլ ֆիրզ» ժապաւենը, որուն կողքին նախորդ շաբթուան կը շարունակուին տասնեակ մը այլ ժապաւեններ: Դժբախտաբար, սակայն, անոնց մէջ քիչերն են, որոնք իւրայատուկութիւն եւ արուեստի նորութիւն ունին եւ վաճառաշահութիւն չեն բուրբեր:



«Ռեգիտանթ իվըլ»ի հերոսները

Լիբանանեան շարժապատկերի շուկային խնդրած միջակ-տկար ժապաւեններուն փաղանգին կը միանայ «Վարտիլըն» ժապաւենը (բեմադրիչ՝ Ճոն Թերրեսթ): 2000ի արտադրութիւն եղող այս ժապաւենին մէջ նախկին ծովակալ Ճոն Քրոս կը հետախուզէ քաղաքին մէջ վայրագութիւններու ալիք ստեղծած նոր թմրեցուցիչի մը թղթածրարը: Իր գործնկիցին միջոցով ան կապ մը կը գտնէ թմրեցուցիչին եւ գերբնական սոսկալի ուժի մը միջեւ: Ժամանակին դէմ պայքար մղելով՝ հե-

րոսը պէտք է յաղթահարէ բազմաթիւ մարտահրաւերներ, որոնց շարքին նաեւ իր ներքին թշնամիները՝ հակակշիռի տակ պահելու իր սեփական ճակատագիրը: Տոմասկներու վաճառքին մէջ կարեւոր ճանաչողական արժեքներ ախորժակներով պատրաստուած է «Ռեգիտանթ իվըլ» ժապաւենը (բեմադրիչ՝ Փոլ Էնտրերըն), ուր անգամ մը եւս կ'արծարծուի աշխարհը վարակիչ եւ մահացու ժահրէ մը փրկելու պատմութիւններուն մէջ տարբերակը: Գաղտնի գործակալութեան մը տարրալուծարանին մէջ վտանգաւոր ժահր մը կը տարածուի եւ բոլոր գիտաշխատողները կը կերպարանափոխուին: Պետութեան կողմէ զրկուած յատուկ ջոկատ մը պէտք է ամէն գնով հակակշիռի տակ պահէ կացութիւնը: Յատկանշական նորութիւններէ գուրկ, սակայն՝ այս տեսակի ժապաւեններ սիրողները գոհ պահող ցուցադրութիւն մը:

ՀԱՍԻԿԱ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՅՏԵՆ
 HAMPIG SASSOUNIAN
 CSP - L.A.C. B - 5 - 131 44750
 60-TH ST. WEST LANCASTER,
 CA, 93536 — USA

ԱՉՂ. «ՅԱՆԱՉ - Գ. ԿԻՒՂՊԵՆԿԵԱՆ» ԵՐԿՐԴ. ՎԱՐԺԱՐԱՆ
ՏՆՕՐԷՆԻ ԿԱՐԻՔ
 Ազգ. «Յառաջ - Գ. Կիւլպենկեան» երկրորդ վարժարանը կարիք ունի վկայելու տնօրէնի մը: Փափաքողները իրենց դիմումները կրնան ներկայացնել վարժարանի խնամակալութեան:
 Ըեռ. 08-620616
 Fax: 08-620614
 ՆՆԱՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԱՐԾԻՔԸ

●●● «ՏԸ ՍԱՄ ԱՖ ՕԼ ՖԻՐՉ» (Փալտրանցեան / Ապրամ, Չուր, Ընդորտ, Ֆրիուէ, Թրիփոլի- Ամփիլ / Սոֆիլ) □ «ԿԱՐՏԻՆԱ» (Փալտրանցեան / Ապրամ, Չուր, Թրիփոլի, Ֆրիուէ, Ընդորտ, Ամպաստ) □ «ՌԵԳԻՏԱՆԹ ԻՎԵԼ» (Փալտրանցեան / Ապրամ, Ընդորտ, Ֆրիուէ) ●● «ԱՏԵՅՅՅՅՅՅՅՅ» (Եսփաս, Ամփիլ / Տիւն, Սոֆիլ, Սոտեք, Սեթ Էլի, Սքալլէս 2001, Լաս Սալինաս, Կալաքսի, Սքարլէյթ) ●●● «ԹՈՍԵԱ» (Ամփիլ / Սոտեք) ●●● «ՌԻՍԵՆ ԹՈՒ ՆԵԲՐԵԼԵՏ» (Փալտրանցեան / Ապրամ, Ընդորտ, Ֆրիուէ) ●● «ՊԼԵՅՏ - 2» (Փալտրանցեան / Ապրամ, Ընդորտ, Ամպաստ, Ֆրիուէ/Փալազ) ●● «ՄԵՆ ԻՆ ՊԼԵՅ - 2» (Եսփաս, Ամփիլ/Սոտեք, Տիւն, Կալաքսի, Սոտեք, Սեթ Էլի, Սքալլէս 2001, Լաս Սալինաս, Սքարլէյթ) ●● «ՊԵՆՏԻՅՈՅ» (Փալտրանցեան / Ապրամ, Չուր, Ընդորտ, Ֆրիուէ) ●● «ԸՐՈՍՐՈՏԱ» (Եսփաս,

Ամփիլ / Տիւն, Սոտեք, Սեթ Էլի, Սքալլէս 2001, Լաս Սալինաս, Կալաքսի, Սքարլէյթ) ●● «ՇԱՅՅՅՅՅՅՅՅ» (Եսփաս, Ամփիլ/Սոտեք, Սքալլէս 2001) ●● «ՊԼԵՅ ՆԱՅՅ» (Սքալլէս 2001, Սքարլէյթ) ●● «ՍՓՈՅՏՏՐ - ՄԵՆ» (Ամփիլ / Տիւն, Կալաքսի) ●● «ՇՕԹԱՅՅ» (Փալտրանցեան / Ապրամ, Չուր) ●● «ՊԵՐՏԵՅՅ ԿԵՐԼ» (Ամփիլ / Սոտեք) □ «ՃԻՄԻ ՆԻԹՐԸՆ. ՊՕՅ ՃԻՆԸՍ» (Փալտրանցեան / Չուր, Ապրամ, Թրիփոլի, Ընդորտ) □ «ԼՈՒԿ ԹԱՅՍ ՏԵՏ» (Փալտրանցեան / Ապրամ, Չուր, Թրիփոլի, Ընդորտ, Ֆրիուէ) ●● «ԿԻՏՈՔ» (Ամփիլ, Սոտեք, Կալաքսի) □ «ԼԵՃՆԵՏ ԱՖ ՏԸ ՈՒՏ ՏՐԵԿԸՆ» (Եսփաս, Սքալլէս 2001, Լաս Սալինաս, Կալաքսի):

●●●● Գերագանց ●●● Չատ լաւ ●● Լաւ ●● Միջակ ●● Ժեք յանձնարարող □ Ժեք դիտած

ԸՆԿՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՍՐԱՀՆԵՐԻՆ ԼԵՌԱԶԱՅՆԻ ԹԻՒՐԸ

Ըսփաս - 09/225116 - Սոտեք - 01/616707 - Տիւն - 01/792123 - Սոֆիլ - 01/328806 - Ընդորտ - 01/738439 - Ամպաստ - 09/226010 - Ֆրիուէ - 01/485590 - Ապրամ - 01/292192 - Քալաքսի - 09/912503 - Չուր - 09/221363 - Սքարլէյթ - 08/813901 - Սեթ Էլի - 04/434392:

«ԱՉՂԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ
 Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ՇՄՍԸ 5:00:

Մարդկային Կարուելակերպ

ՇԵՂՈՒՄՆԵՐ՝ ՄԻՋԻՆԷՆ

ԿԵՆՍԱՐԱՆՆԵՐ ԿՕՐԱԵՆ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐՈՒ ԵՒ ԿԸ ԲԱԶՄՈՐԵՆ, ԹԵ ՄԱՐԴԻԿ ԻՆՉՈՒ ՄԻՃՏ ԱՆՁՆԱԿԵՐ ԳԵՆ: «ՏԻ ԷՆՆՈՍՄԻՍԹ» ԿԸ ՄԱՆՐԱՄԱՆԷ.

Կենսաբանութեան ուսանողներու դասագիրքերը կը պատմեն շուրջ 50 տարի առաջ գինետան մը մէջ տեղի ունեցած զրոյցի մը մասին. երբ բրիտանացի ծինարան ձ. Պ. Ս. Հոլտէյնի հարց տրուած է, թէ արդեօք ան պիտի ուզէ՞ր իր կեանքը զոհել իր հայրենիքին համար, ան թաշկիւնակին վրայ արագ հաշիւ մը ընելէ ետք պատասխանած է, թէ իր կեանքը պիտի զոհէր իր 2 եղբայրներուն եւ 8 զարմուկներուն համար: Այլ խօսքով, ան պատրաստ էր մեռնելու՝ իր ծինական ուժը պաշտօնով կերպով յարող սերունդին փոխանցելու համար:

Կենսաբանութեան մէջ «արեան կապի ընտրանք»ի տեսութիւնը, այսինքն՝ այն գաղափարը, թէ անասուններ կրնան իրենց ծինները փոխանցել օգնելով մօտիկ արեանակիցներու, կը բացատրէ այլասիրութեան մղուած արարքները: Կ'ակնկալենք, որ այլասիրութեան նպաստող ծիններ կրող անձ մը աւելի կանուխ մեռնի, քան թէ ան, որ աւելի «եսակեղրոն» ծիններ ունի եւ նուազ ներդրումներ կը կատարէ յաջող սերունդին «ծինական աւագանին» մէջ: Սակայն, եթէ նոյն անձը իր արեանակիցները պաշտպանելու համար այլասիրական արարքներ գործէ, ապա ինքնին կրնայ նպաստել այլասիրական վերաբերմունքի պատասխանատու ծիններուն փոխանցումին:

Ոչ արեանակիցներու նկատմամբ այլասիրական կեցուածքները եւս կարելի է բացատրել կենսաբանական տեսութիւններով: Անասուն մը կրնայ հոգալ այլ անասունի մը ձագը, որովհետեւ կը յուսայ հետագային օգտուիլ անոր բարիքներէն (այս երեւոյթը ծանօթ է իբրեւ փոխադարձ այլասիրութիւն): Արու որսորդը, որ առատածեռնօրէն իր որսը կը բաժնէ այլոց հետ, հաւանաբար այդպէս կ'ընէ, իր գերակայութիւնը փաստելու համար է գերուել դիմաց եւ, ի վերջոյ, ապահովելու իր սերնդագործելու յաջողութիւնը: Երեւութեամբ այլասիրական այս արարքները իրականութեան մէջ անձնական շահէ մղուած են:

Այս օրինակները կը յարմարին տնտեսագէտներու այն կարծիքին, թէ մարդկութեան եղափոխութեան մէջ խելացի մարդը նաեւ տնտեսագէտ մարդն է, այսինքն՝ ան իր առաւելագոյն կէտին կը հասցնէ տնտեսագէտներու բնութագրումով՝ օգտակարութիւնը, եւ կենսաբաններու բնութագրումով՝ յարմարութիւնը: Սակայն մարդկային բազմաթիւ արարքներ կը հակասեն նման բացատրութիւններու. մարդիկ օգնութիւն կը ցուցաբերեն անպատասպարներու, կը վերադարձնեն կորսուած դրամասնակներ, կամաւոր ծառայութիւն կը մատուցեն, կը վարձատրեն սպասեակներ ճաշարանի մը մէջ, ուր անգամ մը եւս պիտի չայցելեն: «Տնտեսական տրամաբանութեան» եւ «ծինական ընտրանքի» տեսութիւնները չեն կրնար բացատրել անշահախաղիչ արարքները: Անոնք նաեւ չեն կրնար բացատրել հակառակ՝ ատելիքով վարուելակերպը, այսինքն՝ երբ մէկը իր սեփական շահերուն վնասելու գնով վնաս կը պատճառէ ուրիշին: Գիտնականներ այժմ կը փորձեն ուսումնասիրել այս բոլորը:

ՓՈԽԱԿԱՐԾ ԼԱՌՈՒԹԻՒՆ

Գիտնականներ երեւութեամբ տարօրինակ վարուելակերպերը ուսումնասիրելու երկու ձեւեր գտած են: Անոնք կամաւորներու երկու խումբերու հետ փորձած են «հանրագուտ գործեր» եւ «վերջնագիրներու խողեր»: Յիւրիսի համալսարանի դասախօս Էռնէսթ Ֆէհր իր պաշտօնակիցներուն հետ կատարած է «հանրագուտ գործի» մը փորձարկութիւնը, որուն ընթացքին 4 աշակերտներ շուրջ 20 տոյլար ստացած են մասնակցելու համար խմբային խաղի մը: Անոնք թելագրուած է պահել իրենց չըհարկուած գումարները: Ուղղին օրէնքը կ'ըսէր, թէ շահարկուած իւրաքանչիւր տոյլարը 1,60 տոյլարի արդիւնք պիտի տար, սակայն շահը պիտի բաժնուէր խումբին բոլոր անդամներուն միջեւ: Այլ խօսքով, իւրաքանչիւր մասնակցող պիտի ստանար 40 սենթ: Այսպէս, եթէ բոլոր մասնակցողները շահարկէին, իւրաքանչիւրը պիտի շահէր 32 տոյլար եւ «հանրագուտ գործը» կատարուած պիտի ըլլար: Սակայն, կեթէ միայն մէկ հոգի շահարկէր, ան միայն 8 տոյլար պիտի շահէր:

Փորձը սկիզբը կիրարկուած է 6 հանգրուանով: Մասնակցողները չէին ճանչնար գիրքը, սակայն անոնք նոյն պահուն որոշումներ կայացուցած են եւ միայն մէկ անգամ հաղորդակցած են իրարու հետ: Իւրաքանչիւր հանգրուանի աւարտին իւրաքանչիւր խաղողի ըսուած է, թէ միւսները ինչպէս շահարկած են եւ իւրաքանչիւրը ինչ պիտի շահէր: Ուղղին այս տարբերակին մասնակցողները չուտով անդրադարձած են, թէ շահարկելը ձեռնտու չէր: Երբ հանգրուանին համայնական անտուկին մէջ ոչ մէկ գումար մնացած էր:

Փորձին երկրորդ տարբերակը առիթ կու տար մասնակցողներուն, որ նիւթակապ պատիժ սահմանեն իւրաքանչիւր հանգրուանի աւարտին: Մասնակցող մը կրնար 1 տոյլար աւելցնելով 3 տոյլարի տուգանքի ենթարկել այլ մասնակցող մը: Փորձին մասնակցած 240 անձներուն 84 առ հարիւրը առնուազն մէկ անգամ

պատժուած է եւ 9 առ հարիւրը՝ առնուազն 10 անգամ: Պատիժ սահմանողներուն մեծամասնութիւնը միջինէն վեր «գործակցողներ» էին, որոնք միջինէն վար «ազատ շարժողներուն» պարտադրած են իրենց կամքը: Պատիժը ինքնին սահմանուած է անարդարութեան պարագային, իսկ տուգանքը որոշուած է միջինէն շեղելու տարողութեան համաձայն: Իրօք, պատիժը արդիւնք տուած է: Անիկա նկատուելի համեմատութեամբ բարձրացուցած է ընդհանուրին համար շահարկուած գումարը. մասնակցողներուն աւելի քան 90 առ հարիւրը յաւելեալ գումարներ շահարկած է պատիժէ խուսափելու համար:

Այս պատիժները երեւութեամբ մաղձոտ կը թուին ըլլալ, սակայն խորքին մէջ այլասիրական բնոյթ ունին, որովհետեւ շահարկումի իւրաքանչիւր հանգրուանէ ետք մասնակցողները տարբեր խումբերու բաժնուած են, որպէսզի երբեք նոյն անձերուն հետ չշահարկեն: Հետեւաբար անոնք գումարներ կը վճարէին պատժելու համար մէկը, որուն հետ այլեւս կապ պիտի չունենային: Այլ խօսքով, այլասիրութիւնը իբրեւ պատժելու մղով ուժ ի յայտ եկած է խաղին երկրորդ տարբերակին մէջ:

ՎԵՐՁՆԱԳԻՐՆԵՐ

Այն գաղափարը, թէ մարդիկ երբեմն «արդար վերաբերմունքը» կը նախընտրեն անձնական շահէն, ակնհերեւ է «վերջնագիրներու խաղ»ի մը մէջ: Միջիններ համալսարանէն մարդաբան մը իր պաշտօնակիցներուն հետ փորձարկած է նման խաղ մը, որուն ընթացքին մասնակցողին կը տրուի օրուան մը աշխատավարձին համազօր գումար մը եւ անոր կը թելադրուի գումարէն բաժին մը յատկացնել անորուն անձի մը, որուն դարձեւ պիտի չհանդիպի: Անանուն անձը կրնայ ընդունիլ կամ մերժել առաջարկը: Սակայն անոր կ'ըսէր, թէ մերժելու պարագային ոչ ինչք եւ ոչ ալ մասնակցողը որեւէ գումար պիտի ստանայ:

«վերջնագիրներու խաղ»ին տրամաբանութիւնը կ'ըսէ, որ եթէ մարդիկ կ'ուզեն բազմապատկել իրենց նիւթական աղբիւրները, պէտք է ընդունին նուիրատուի մը կողմէ իրենց առաջարկուած գումարը: Միւս կողմէ, նուիրատուն միշտ պիտի փորձէ նուազագոյնը տալ: Սակայն իրականութիւնը տարբեր է. առաջարկներ եւ մերժումներ կը կատարուին արդարամիտ որոշումներու հիմամբ: Ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, թէ իբրեւ նուիրատուներ կ'ընտրուած գումարները կը տարուեր ինչի մայր գումարին 22 առ հարիւրէն 58 առ հարիւրին միջեւ, իսկ 50 առ հարիւրէն վեր գումարները երբեմն մերժուած են:

Երկու փորձարկութիւններուն արդիւնքէն մեկնելով՝ մարդաբաններ եզրակացուցած են, թէ առաջարկ մը ընդունիլը կամ մերժելը անմիջականօրէն կապ ունի արդարութեան, փոխադարձ ազդեցութեան եւ նիւթական շահի հետ: Մարդիկ կը վարձատրեն գործակցութեան ոգի ցուցաբերողները եւ կը պատժեն այն անձերը, որոնք անձնասէր են, նոյնիսկ երբ պատիժին համար գին մը կը վճարեն:

«ԶՕՐԱԻՈՐ ՓՈԽԱԿԱՐԾՈՒԹԻՒՆ»

Անշուշտ սակա պարզապէս գիտական մէկ հաստատումն է մարդկային սովորական վարուելակերպի մը: Եւ երբ նոր երեւութի մը կ'ընդունուի գիտութեան կողմէ, անոր անուն մը տարը յաճախ արդիւնաւէտ է: «Հիւումըմ Նէյ-չըր» թերթին մէջ մասնագէտներ այս երեւոյթը կը կոչեն «զօրաւոր փոխադարձութիւն»: Այս բնորոշումին նպատակն է զայն տարբերել «փոխադարձ այլասիրութեան» երեւոյթէն: Էռնէսթ Ֆէհրի համաձայն, անհատ մը «զօրաւոր փոխադարձող» է, երբ պատրաստ է նիւթապէս վարձատրելու ազնի վերաբերում ցուցաբերող անձ մը եւ պատժելու անազնիւ անձ մը: Թատկանչական է, որ «զօրաւոր փոխադարձողներ» այս ձեւով կը վերաբերին, նոյնիսկ երբ անոնց արարքը նիւթական վարձատրութեան հեռանկարներ չի խոստանար:

Անշուշտ սակա չի բացառուած է: Եղափոխութեան արդի օրէնքին համաձայն, երբ մէկը չի գոյատեւեր, այսինքն կը մեռնի, անոր ծինները չեն փոխանցուելի յաջող սերունդին: Բնութեան մէջ գոյատեւումի սպառնացող վտանգներ, ինչպէս՝ վայրի անասուններ, սեռային մրցակիցներ թիրախ կ'ընտրեն անհատը: Իսկ այն վտանգները, ինչպէս՝ հրահրուած վտանգներ, որոնք կրնան միաժամանակ ամբողջ հաւաքականութիւններ ոչնչացնել եւ հաւաքական դիմադրութեան չեն հանդիպիր, անհատին սպառնացող վտանգներ կը համարուին: Սակայն այն, ինչ որ անհատի մը մահուան պատճառ կը դառնայ, նաեւ յաճախ կը վտանգէ ամբողջ հաւաքականութիւն մը, եւ որուն դէմ հաւաքական դիմադրութիւն մը կրնայ յաջող



արդիւնք տալ: Այսպէս, ամբողջ հաւաքականութիւն մը կրնայ վերածուիլ գոյատեւելու կողմանի: Մարդոց պարագային, որոնք լեզուական հաղորդակցութեան շնորհիւ գործակցելու առաւելութիւնը ունին, հաւաքական ուժով կարելի է յաղթահարել հաւաքականութեան մը դէմ սպառնացող բազմաթիւ վտանգներ, ինչպէս՝ պատերազմ, սով եւ կենսապայտուիչ աղէտներ: «Զօրաւոր փոխադարձութեան» տէր անհատներէ բաղկացած հաւաքականութիւններ կրնան աւելի լաւ տոկալ եւ գոյատեւել, որովհետեւ անոնց վերաբերմունքը նոյնիսկ անձնասէր անձերը կը մղէ մասնակցելու հանրագուտ գործին, որուն նպատակը ընդհանրական լաւութիւնն է: Այս

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐ ԿԸ ՓՈԽԱԿՐԻՆԵՆ ԾԱԽՈՂՆԵՐԸ

ՇՈՒԿԱՆԵՐԸ ԿՈՂՋՈՒՆԵՆ ՅԱՃԱՍՈՐԴՆԵՐՈՒՆ ԷՈԳԵԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՄԱԿԱՐԳԻՉՈՎ ԸՆՆԵՆՈՒ ՆՈՐ ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ, ՍԱԿԱՅՆ ԳՆՈՐԴՆԵՐ ՄՏԱՆՈՎ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՋԱՏՈՒԹԵԱՄԲ: «ՏԸ ՌԻԱԾԻՆԿԹԸ ՓՈՍԹ» ԿԸ ԳՐԷ.

Փրատայի անուանի Սօձօ վաճառատան մէջ կին մը մեծ օճիգով փայլուն կապոյտ բաճկոն մը եւ թոյլ գօտի մը ընտրելէ ետք զայն ցոյց կու տար ծախողին, որպէսզի արձանագրէ եւ ինք փորձէր: Ան չէր գիտեր, թէ մինչ այդ ծախողը քննութեան կ'անցնէր նաեւ զինք:

Հագուստին վրայ թելով կախուած էր սեւ պահարանի մը մէջ դրուած համակարգիչի փոքրիկ չիփ մը: Անիկա նշան մը կը փոխանցէր վաճառատան թիկունքի մէկ սենեակը, որուն մէջ համակարգիչ մը կը հետեւէր կնոջ շարժումներուն: Համակարգիչը իր հերթին հրահանգ մը կ'արձակէր դէպի ելեկտրոնիք պատահա մը, որ գետնախորձ էր այն խուցին մօտ, ուր կինը կը փորձէր ընտրել հագուստը: Համակարգիչը ցոյց կու տար պատկերը այն բաճկոնին, որ ան կը փորձէր, մանրամասնօրէն ուրուագծելով անոր ձեւը, կտորին յատկութիւնները եւ գոյնը: Կինը բարձրացած էր, թէ համակարգիչը որքան շատ քան փորձէր:

Փրատա վաճառատունը կը վերածուի գիտաշխատանոցի մը խաղկանք առթող վայրի, ուր պիտի ուսումնասիրուի գնորդներուն հոգեբանութիւնը: Այժմ վաճառատներուն մէջ իւրաքանչիւր հագուստի տեղը ճշդուած է եւ արձանագրուած: Այն յաճախորդները, որոնք մաս կը կազմեն վաճառատան հաւատարիմ գնորդներու ցանկին, պիտի ենթարկուին իրենց փորձած եւ գնած հագուստներուն առընչուող տեղեկութիւններուն վրայ հիմնուած ուսումնասիրութեան մը:

Նախապէս, երբ գործատէրեր կ'ուզէին գիտնալ, թէ յաճախորդներ ինչ կը մտածէին իրենց վաճառատան մէջ ծախուած ապրանքին եւ գնումի փորձառութեան մասին, պարզապէս կը կանգնեցնէին յաճախորդները կամ գանոնք կը հրահրէին կարծիքներ լսելու համար: Այժմ արհեստագիտութիւնը առիթ կու տայ ծախողներու, որ աւելի լաւ կատարեն իրենց ուսումնասիրութիւնները. այսինքն՝ գաղտնի քննեն յաճախորդները, ինչպէս գիտնականները կ'ուսումնասիրեն անասունները վայրի բնութեան մէջ:

Հագուստի այս անուանի վաճառատունը միայն մէկն է այն հարիւրաւոր ընկերութիւններէն, որոնք վերջին ամիսներուն սկսած են փորձարկել յաճախորդները քննելու նոր արհեստագիտութիւններ: Քննութեան ձեւ մը կ'ուսումնասիրէ յաճախորդներուն «դիտելու» տեւողութիւնը. այսինքն յաճախող մը որքան երկար կը դիտէ դարանի մը յատուկ մէկ մասը: Արդիւնքին հիման վրայ կը վերադասուորուին դարանին այն բաժինները, որոնք յայտնապէս չեն գրաւեր յաճախորդները: Ելեկտրոնիք «զգայարաններ» կը հաշուեն դէպի յատուկ բաժին մը ուղղուող յաճախորդներուն թիւը, ինչ որ կ'օգնէ գործատէրներուն աւելի ճիշդ ձեւով բաշխելու իրենց պաշտօնեաները: «Շատ յաճախ մարդիկ տարբեր բան կ'ըսեն եւ տարբեր բան կ'ընեն, - կ'ըսէ «վաճառքի ստուգարանութեան» մէջ մասնագիտացած ընկերութեան մը հիմնադիրը՝ Երբ գնորդները կը դիտենք առաջ անոնց գիտնականներ, աւելի ամբողջական գաղափար մը կ'ունենանք անոնց մղումներուն մասին»:

ձեւով կը տարածուին «զօրաւոր փոխադարձութեան» ծինները:

«Զօրաւոր փոխադարձութեան» գաղափարը միաժամանակ կը ծառայէ բացատրելու ցարդ անհասկնալի յայտարարական արարքներն ու ատելութեան գոյութիւնը: Տեսականօրէն այս բացատրութիւնը գրաւիչ է: Անոր ջատագովները նաեւ կը կարծեն, թէ այս տեսութեան կիրարկումը գործնական կրնայ ըլլալ: Նիւ Մեքսիքոյի Սանթա Ֆէ համալսարանէն եւ Մասաչուսէթսի համալսարանէն երկու տնտեսագէտներ՝ Մամուէլ Պատուզ եւ Հըրպըրթ ձենթիս կը կարծեն, որ եթէ քաղաքականութիւն մշակողներ կ'ուզեն հանրագուտ աշխատանքներ կատարել, ինչպէս՝ նիւթական հասարակաց կարիւրներ բաժնել, կրնան հանրութեան օգտակար ըլլալու տրամադիր անձերու առիթ տալ, որ պատժեն ընկերութեան մէջ «ազատ շարժողները»: Նման միջոցառումներ արդիւնաւէտ են ձկնորսական փոքր հաւաքականութիւններու մէջ, ուր «ազատ շարժողները» կը պատժուին վտարուելով իրենց ընկերութեանէն: Այս տեսակի պատժներ ընկերութեան վրայ ընդհանրացնելով՝ կարելի է մարդկային բնութեան աւելի լաւ կողմը հակադրել անոր ժխտական կողմին եւ աւելի լաւ կեանք մը պարզեւել բոլորին:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐ ԿԸ ՓՈԽԱԿՐԻՆԵՆ ԾԱԽՈՂՆԵՐԸ

ՇՈՒԿԱՆԵՐԸ ԿՈՂՋՈՒՆԵՆ ՅԱՃԱՍՈՐԴՆԵՐՈՒՆ ԷՈԳԵԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՄԱԿԱՐԳԻՉՈՎ ԸՆՆԵՆՈՒ ՆՈՐ ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ, ՍԱԿԱՅՆ ԳՆՈՐԴՆԵՐ ՄՏԱՆՈՎ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՋԱՏՈՒԹԵԱՄԲ: «ՏԸ ՌԻԱԾԻՆԿԹԸ ՓՈՍԹ» ԿԸ ԳՐԷ.

Մարդկային վարուելակերպի այլ մասնագէտ մը կը հաւատայ, թէ այս տեսակի ուսումնասիրութիւնները կարեւոր են այս դարին, որովհետեւ մարդիկ որեւէ ժամանակ աւելի պակաս կը շրջին վաճառատուներու մէջ. գնորդներ միջին հաշուով 11,27 վայրկեան, իսկ ոչ գնորդներ՝ 2,36 վայրկեան: Ինչ կը վերաբերի գնումներուն, անոնց 60Ն 70 առ հարիւր կը կատարուի բնագրային մղումով: Հետեւաբար գործատէրներու համար կարեւոր է գիտնալ, թէ ինչ բան կը ներգրաւէ յաճախորդները:

Բազմաթիւ ուսումնասիրութիւններ կը կատարուին ծածուկ, որովհետեւ գործատէրեր կը վախնան իրենց անձնական ազատութեան նախանձախնդիր յաճախորդներու ընդվզումէն:

«Շափըր Թրէք» վերլուծական ընկերութիւնը յաճախորդները ուսումնասիրող արհեստագիտական կազմածներ եւ սպասարկութիւններ հաստատած է աւելի քան 10 հազար վաճառատուներու մէջ: Անիկա լուսանկարչական ելեկտրոնիք գործիքներով պատկերներ կ'ուղարկէ համակարգիչներու՝ վերլուծումի համար:

Ներկայիս արհեստագիտական այս կազմածը միայն յաճախորդներուն թիւը կրնայ հաշուել: Սակայն ընկերութիւնները քանի մը ամիսէն պիտի կատարեն յաճախորդներէն զայն, որմէ ետք կարելի պիտի ըլլայ նաեւ արձանագրել յաճախորդներուն ինքնութիւնը եւ անոնց աչքերուն շարժումները, ինչ որ շատ կը հետաքրքրէր գործատէրերը: Թէեւ սակաւաթիւ վաճառատուներ կ'օգտագործեն նման արհեստագիտութիւններ, սակայն շատեր գանոնք կը փորձեն գիտաշխատանոցներու մէջ:

Այսուհանդերձ թաքուն աչքերու կողմէ դիտուելու եւ՝ արձանագրուելու գաղափարը ջգագրուութիւն կը պատճառէ շատերուն: Թաճախ ֓րատա վաճառատունը այցելող յաճախող մը կ'ըսէ. «Կը խելագարիմ, եթէ գիտնամ, թէ տեղ մը ինձի վերաբերող տեղեկութիւններ կ'արձանագրուին եւ կը վաճառուին»:

(ԶԱՊԱՒՈՒԱՄ)

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒՆՅԵԱՆ-ՄՐԱՊԵԱՆ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողները կը խնդրուի ծանուցումի բնագիտութեանը (հաստատութեան) պատկանող պատկերի վրայ, եւ՝ հաստատութեանը թուղթի վրայ, եւ՝ հաստատութեանը (հաստատութեան) ներկայացրելու «Ազգակ»ի ծանուցումներու գրասենյակում:

